**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
**2026 թվականի փետրվարի 11-ի թիվ 1.2 որոշմամբ** և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն
Ընթացակարգի ծածկագիրը **«ՀՀ ԱԱԾ-ՏԱԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀՊՄ1»**

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար համակարգչային, պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ու պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՀՀ ԱԱԾ-ՏԱԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀՊՄ1»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ **2026 թվականի փետրվարի 09-ին և փետրվարի 10-ին** ստացված հարցումները և դրանց վերաբերյալ **2026 թվականի փետրվարի 11-ին** տրամադրված պարզաբանումը՝

Հարցում 1

«Հարգելի Պատվիրատու, 40-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված քարթրիջի տպագրության քանակը՝ առնավազն՝1350 էջ, վերաբերվում է միայն սև քարթրիջին: Այս տպաքանակը նշված է նաև տվյալ քարթրիջի մյուս գույների ներքո, որոնք տպում են ավելի քիչ: Խնդրում ենք տալ պարզաբանում: Կանխավ շնորհակալություն»:

Հարցում 2

«Հարգելի Պատվիրատու, 36-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է, որ. մեջբերում եմ <<Ապրանքի լրակազմում ներառված լինի համապատասխան չիպ>>: Նշված քարտրիջները, անգամ օրիգինալները և արտադրող գործարանն արտադրում է առանց չիպի: Կարելի է արդյոք հասկանալ, որ նշված պահանջը վերաբերելի է, որ քարտրիջները իրենց գործարանային փաթեթավորման մեջ ունենան էլեկտրոնային հիշողության համակարգ (հաճախ անվանում են չիպ), որը կարող է ապահովել Տպագրության նվազագույն քանակ՝ առնվազն 2000 էջ:»:

Հարցում 3

«Հարգելի պատվիրատու 54-րդ չափաբաժնով 12 հատը նշանակում է յուրաքանչյուր գույնից 2 հատ թե՞ պահանջելու եք յուրաքանչյուր գույնից 12 հատ»:

Պարզաբանում 1

«Հարգելի գործընկեր, 40-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված քարթրիջի տպագրության քանակը՝ առնվազն 1350 էջ (A4 ֆորմատի թղթի 5% լցվածության դեպքում) վերաբերվում է միայն սև գույնի քարթրիջին: Մյուս 3 գույների քարթրիջներից յուրաքանչյուրի տպագրության քանակը պետք է լինի՝ առնվազն 1250 էջ (A4 ֆորմատի թղթի 5% լցվածության դեպքում):»:

Պարզաբանում 2

«Հարգելի գործընկեր, 36-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված §Ապրանքի լրակազմում ներառված լինի համապատասխան չիպ¦ նախադասության իմաստը կայանում է նրանում, որ եթե Ձեր կողմից առաջարկվող տվյալ տեխնիկական բնութագրին համապատասխանող քարտրիջը աշխատում է չիպով, ուրեմն լրակազմում պետք է ներառված լինի համապատասխան չիպ: Իսկ եթե առաջարկվող քարթրիջն աշխատում է առանց չիպի, ուրեմն վերջինիս լրակազմում լինելու անհրաժեշտությունը չկա:»:

Պարզաբանում 3

«Հարգելի գործընկեր, 54-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված քարտրիջի լրակազմը բաղկացած է 6 գույնից: Մեր կողմից պահանջվել է 12 լրակազմ, այսինքն՝ յուրաքանչյուր գույնից 12 հատ:»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **«ՀՀ ԱԱԾ-ՏԱԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀՊՄ1»** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանին:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 08):

Էլեկտրանային փոստ՝ v.eloyan@promotion.am:

**«ՀՀ ԱԱԾ-ՏԱԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀՊՄ1»** ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովՀՀ ԱԱԾ ՏԱ
և